

## ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ-ում 2022թ. ապրիլի 4-10-ը դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

Ապրիլի 7-8-ը շրջանների զգալի մասում, 6-9-ը առանձին շրջաններում դիտվել է անձրև:

Տեղումների գումարային քանակը կազմել է՝ Գյումրիում, Ջերմուկում, Աշոցքում, Տաշիրում՝ 30-37մմ: Մնացած բոլոր շրջաններում տեղումների գումարային քանակը կազմել է՝ 11-25մմ:

Ապրիլի 4-5-ին, 10-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը ապրիլի 4-6-ին եղել է նորմայից բարձր 4-7 աստիճանով, 7-10-ին եղել է նորմայի սահմաններում դրական և բացասական շեղումներով:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Սյունիքի հովիտներում՝ +31...+33°C, նախալեռներում՝ +21...+24°C, Արմավիրում, Արարատում՝ +27...+30°C, Տավուշում՝ +25...+29°C, Վայոց ձորի նախալեռներում՝ +27°C, լեռներում՝ +16°C, Արագածոտնի նախալեռներում՝ +20...+26°C, լեռներում՝ +12...+13°C, Լոռիում՝ +18...+24°C, Կոտայքի նախալեռներում՝ +23°C, լեռներում՝ +17...+18°C, Շիրակում՝ +12...+18°C (Գյումրի՝ +20°C), Գեղարքունիքում՝ +12...+19°C, Երևանում՝ +25...+26°C:

Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է Արագածոտնի լեռներում՝ 0...-5°C, նախալեռներում՝ +2...+4°C, Շիրակում 0...-4°C (Աշոցք՝ -8°C), Գեղարքունիքում՝ -1...-4°C, Լոռիում՝ -1...-3°C (Օձուն՝ +2°C), Կոտայքի լեռներում՝ -2...+1°C, նախալեռներում՝ +3°C, Վայոց ձորի լեռներում՝ -2°C, նախալեռներում՝ +4°C, Սյունիքում՝ հովիտներում՝ +6°C, նախալեռներում՝ -1...+2°C, Տավուշում՝ 0...+6°C, Արարատում՝ +2...+3°C, Արմավիրում՝ +4°C, Երևանում՝ +1...+5°C:

Ապրիլի 7-ին, առանձին շրջաններում դիտվել է մառախուղ՝ 50-500մ տեսանելիությամբ:

Ապրիլի 4-10-ին առանձին շրջաններում դիտվել է քամու ուժգնացում՝ 16-29մ/վրկ արագությամբ:

Ապրիլի 11-ի դրությամբ ձյան ծածկի բարձրությունը Արագած բ/լ-ում կազմում է՝ 209սմ, Ամբերդում և Վարդենյաց լ-ք-ում՝ 15-20սմ, Ջերմուկում՝ 11սմ: Մնացած շրջաններում ձյան ծածկը բացակայում է:

Շաբաթվա ընթացքում որոշ լեռնային շրջաններում բազմամյա միջին արժեքներին մոտ, նախալեռնային շրջաններում՝ 8-12 օր ուշ աշնանացան ցորենի վեգետացիան վերսկսվել է, այն գտնվել է երրորդ տերևի և թփակալման փուլերում:

Հովտային շրջաններում եղանակային պայմանները նպաստավոր են եղել մշակաբույսերի աճի և զարգացման համար, սակայն դիտված տեղումները դժվարեցրել են դաշտային աշխատանքները:

Դեղձենու մասսայական ծաղկումն Արարատյան դաշտում դիտվել է կանխատեսված ժամանակահատվածում, մնացած պտղատուների բողբոջները ուռչել են, տեղ-տեղ բացվել, ծիրանենու ծաղկումն ավարտվել է, առաջացել են առաջին տերևները:

Ապրիլի 4-7-ը հանրապետության գետերում դիտվել է ջրի ելքերի մեծացում, առանձին գետերում զգալի: Ապրիլի 8-10-ը հանրապետության գետերում դիտվել է փոփոխական ռեժիմ:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում (03.04.22-10.04.2022թթ. տարբերությունը) բարձրացել է 1սմ-ով և կազմել՝ 1900.47մ (10.04.22թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից ցածր է 20 սմ-ով: